ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

- ք. Երևան, փ. Բուզանդ 1/3
- г. Ереван, ул. Бузанда 1/3
- 1/3 Buzand st., Yerevan
- www._envexpertise@env.am

Հեռ.(374 011) 220-218
Тел. (374 011) 220-218
Tel. (374 011) 220-218

26/386
«04» 07 2025թ.

Վայոց ձորի մարզի
Ջերմուկ համայնքի ղեկավար
պարոն Վահագն Արսենյանին

Հարգելի պարոն Արսենյան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. հուլիսի 21-ին՝ ժամը 12:00-ին Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿԽ-ի հանքավայրի 3-րդ տեղամասում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Խնդրում եմ աջակցել և ապահովել ազդակիր համայնքի/բնակավայրի (Գնդեվազ) և շահագրգիռ հանրության, համապատասխան մասնագետների մասնակցությունը հանրային լսմանը:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), Ջերմուկի համայնքապետարանի և նախաձեռնողի (առկայության դեպքում) պաշտոնական կայքում: Տեղեկատվություն ստանալու և առաջարկություններ ներկայացնելու համար դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին (հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, էլ.փոստ՝ envexpertise@env.am):

Հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կտեղադրվեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Առդիր՝ 1 նիշք:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

Առաջատար մասնագետ Գոհար Մինասյան,
հեռ 011 22-02-17